# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հուլիսի 2014թ. N 457-Ն

ք.Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 333-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տողի ենթաշրջանում գյուղատնտեսական զարգացման 2014 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 333-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ բաժնի 4-րդ կետում «կոմբայնի» բառը փոխարինել «անիվավոր տրակտորի» բառերով.
2) 2-րդ բաժնի 5-րդ կետում «12000.0» թիվը փոխարինել «14000.0» թվով.
3) 2-րդ բաժնի 6-րդ կետում «7640.0» թիվը փոխարինել «5640.0» թվով.
4) 2-րդ բաժնի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

### «ՏՈՂԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

(հազար դրամ)

| *Հ/Հ* | *Ներդրումների նպատակը* | *2014թ.* | *այդ թվում՝ ըստ եռամսյակների* | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *1-ին* | *2-րդ* | *3-րդ* | *4-րդ* |
| 1. | Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն | 3550.0 | | 2710.0 | 840.0 | |
| 2. | Պտղատու այգիների հիմնադրում | 3810.0 | | 2810.0 | | 1000.0 |
| 3. | Ոռոգման համակարգի բարելավում | 35000.0 | | 20000.0 | 15000.0 | |
| 4. | Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում | 2000.0 | | 2000.0 | | |
| 5. | Խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերում | 14000.0 | | 2000.0 | 2000.0 | 10000.0 |
| 6. | Անասնաշենքերի վերանորոգում | 5640.0 | | | 5640.0 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Դաշտերի մաքրում թփուտներից և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում | 8000.0 | | 8000.0 | | |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | *72000.0* | | *37520.0* | *23480.0* | *11000.0* |

.

5) 3-րդ բաժնի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Տողի ենթաշրջանում անիվավոր տրակտորի ձեռք բերումը կնպաստի անասնակերի հավաքման, կուտակման և այլ ներտնտեսական աշխատանքների իրականացմանը:»:

6) 3-րդ բաժնի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) անասնագլխաքանակի ավելացման նպատակով ձեռք կբերվի 25 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 103 գլուխ մանր եղջերավոր անասուն, որոնց բուծման արդյունքում տվյալ տարում և հետագա տարիներին կարտադրվի 20000 կիլոգրամ կաթ և 5490 կիլոգրամ միս կենդանի քաշով, դրանց ընդհանուր գումարը գործող գներով կազմում է 7 890 000 ՀՀ դրամ:»:

7) Ցանկը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ց Ա Ն Կ

**2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի  շրջանի Տողի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները**

| *Հ/ h* | *Համայնքի անվանումը* | *Բազմամյա կերային խոտաբույսերի մշակություն* | | | | *Պտղատու այգիների հիմնադրում* | | *Ոռոգ ման համա կարգի բարե լավում (հազար դրամ)* | *Գյուղտեխնիկայի ձեռք բերում* | | *Դաշտերի մաքրում թփուտներից և դաշտամիջյան ճանապարհ ների վերանորոգում (հազար դրամ)* | *Անաս նաշեն-քերի վերանոր ոգում (հազար դրամ)* | *ԽԵԱ, ՄԵԱ ձեռքբերում* | | *Ընդա մենը հա մայնքում (հազար դրամ)* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *Նախատեսվում է ցանքս (հա)* | *Տրամադրվող ֆինանսական միջոցներ (հազար դրամ)* | | | *Տնկի (հատ)* | *Ընդամենը գումար (հազար դրամ)* | | *Միա վոր* | *Ընդամենը գումար (հազար դրամ)* | | | *Գլուխ* | *Ընդա մենը գումար (հազար դրամ)* | |
| | | | *Պահանջվող դեզվածկեքի գումար* | *Պահանջվող սերմացուի գումար* | *Ընդամենը գումար* | | | | | | | | | | |
| ***1*** | Տող | | | | | | | | | | | | | | |
| ***2*** | Տումի | 10 | 194.0 | 850.0 | 1044.0 | 700 | 700.0 | | 1 | 2000.0 | 5700.0 | | 20 | 10000.0 | 19444.0 |
| ***3*** | Ազոխ | | | | | 100 | 90.0 | | | | | | | 2000.0 | 2090.0 |
| ***4*** | Դրախտիկ | 10 | 194.0 | 850.0 | 1044.0 | 150 | 135.0 | | | | | | | | 1179.0 |
| ***5*** | Թաղուտ | 2 | 39.0 | 170.0 | 209.0 | 300 | 300.0 | 35000.0 | | | | | | | 35509.0 |
| ***6*** | Հակակու | 4 | 78.0 | 340.0 | 418.0 | 750 | 675.0 | | | | | | | | 1093.0 |
| ***7*** | Մեծ Թաղեր | 8 | 155.0 | 680.0 | 835.0 | 1520 | 1370.0 | | | | | | | | 2205.0 |
| ***8*** | Մոխրենես | | | | | 600 | 540.0 | | | | 2300.0 | | 50 | 2000.0 | 4840.0 |
| ***Ընդամենը*** | | ***34*** | ***660.0*** | ***2890.0*** | ***3550.0*** | ***4120*** | ***3810.0*** | ***35000.0*** | ***1*** | ***2000.0*** | ***8000.0*** | ***5640.0*** | ***70*** | ***14000.0*** | ***72000.0*** |

: »:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ